



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՐԻՄՍԻԱԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ

**ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
 ԳԼԽԱԴՈՐ ՀԻՊԱՏՈՍ ԳԱԳԻԿ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ**

Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահը Չորեքշաբթի, 31 Մայիսի երեկոյեան իւրայատուկ հանդիսութեան մը ժամադրաձայրը եղաւ մեր գաղութի ներկայացուցիչներուն համար, որոնք ի մի խմբուած էին հրաժեշտ տալու Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Գագիկ Կիրակոսեանի եւ իր Տիկնոջ՝ Մարինայի, նկատի ունենալով, որ նորին վստահութիւնը, աւարտած ըլլալով իր պաշտօնավարութեան շրջանը, շուտով պիտի վերադառնար մայր հայրենիք:

Ընթրիքի հանդիսաւոր երեկոն կազմակերպուած էր Ազգային Առաջնորդարանին կողմէ, նախագահութեամբ եւ հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ ազգային բարերարուհի Տիկին Աշխէն Փիլաւճեանի: Ներկայ էին Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տոքթ. Վիգէն Յովսէփեան, Ազգային Վարչութեան ընթացաւարտ եւ նորընտիր կազմերու ներկայացուցիչները, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Յովիկ Սալիպա եւ այլ անդամներ, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչը, ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց վարչութիւններու եւ մամլոյ ներկայացուցիչներ, բարերարներ ու Ազգային Առաջնորդարանի բարեկամներ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի ու յանձնախումբերու ներկայացուցիչներ:

Աւելի քան 125 ներկայացուցչական դէմքերու մասնակցութեամբ տեղի ունեցած հրաժեշտի հանդիսութիւնը սկսաւ Առաջնորդ Սրբազանին ու հոգեւորականաց դասու անդամներու աղօթքով: Հանդիսավարն էր Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան, իսկ գեղարուեստական յայտագիրին երկու երգով մասնակցութիւն բերաւ Սուրէն Սրկ. Հազարեան, դաշնակի ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:

Սրտի խօսքեր արտասանեցին Ազգային Վարչութեան ընթացաւարտ ատենապետ Տիար Հրայր Պալեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Յովիկ Սալիպա եւ Առաջնորդ Սրբազանը:

Տիար Հրայր Պալեան վեր առաւ գլխաւոր հիւպատոսին վաստակն ու բոլորին հետ սերտ գործակից ըլլալու հանգամանքը, դրուատիքով անդրադարձաւ անոր ու

ազնիւ տիկնոջ հարազատի վերաբերմունքին, ու յաջողութիւն մաղթեց հայրենի դիւանագետին յառաջիկայ հայրենասուեր աշխատանքներուն:

Տոբ՞. Կարօ Յակոբեան դրուատիքով արտայայտուեցաւ հայրենի ներկայացուցիչին աշխատանքին մասին, որ ի սպաս դրուած է մեր հայրենիքին ու մեր ժողովուրդին, աշխատանք մը՝ որ օրինակելի է. ան ըսաւ, որ ինք ալ վաղուց ցանկութիւնը ունեցած է նմանօրինակ ծառայութիւն մատուցելու մայր հայրենիքին, ու իր խօսքը եզրափակեց բարի երթ մաղթելով անոր:

Տիար Յովիկ Սալիպա իր կարգին կանգ առաւ մեր գաղութի մեծ ընտանիքի բոլոր անդամներուն հետ սերտօրէն ու անխտրական կերպով գործելու Տիար Գ. Կիրակոսեանի արժանիքներուն վրայ, ընդգծեց անոր պարտաճանաչութիւնն ու մեր հայրենիքի մէկ խորհրդանիշը ըլլալու հանգամանքը, յիշեցնելով, որ ան եղաւ ամէն տեղ, ուր անհրաժեշտ էր ըլլալ իբրեւ հայրենիքի ներկայացուցիչ: Ան նշեց, որ հայրենի դիւանագետէն կը բաժնուինք բարի նախանձի զգացումով, որովհետեւ ան հայրենիք կ'երթայ, Յայաստան՝ որ բոլոր հայերուս սելեռակետն է ու բոլորս կը կանչէ հոն բնակութիւն հաստատելու վերջնականապէս:

Հրաժեշտի իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին ձայնակցեցաւ գլխաւոր հիւպատոսին բարի երթի մաղթանքներուն, միաժամանակ անոր փոխանցելով Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ- Արամ Ա. Կաթողիկոսի ողջոյններն ու օրհնութիւնները: Ան ընդգծեց, որ հայրենի դիւանագետը մեր գաղութին մէջ իր պաշտօնավարութեան առաջին օրէն իսկ գործեց իբրեւ հարազատ մէկ անդամը այս մեծ ընտանիքին, եղաւ բոլորիս հետ, ամէն տեղ, աշխատեցաւ անխտրական ոգիով, հայրենիքի ընդհանրական շահերով առաջնորդուած, գիտակից իր պաշտօնին եւ իրեն վստահուած առաքելութեան: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ հայրենի դիւանագետին հայրենաստրի, ընտանեւերի ու հաւատացեալ ու հաւատաւոր մարդու արժանիքները եւ մաղթեց, որ ան իր յառաջիկայ գործունեութեան դաշտերուն մէջ արձանագրէ նորանոր նուաճումներ, ի խնդիր մեր հայրենիքի բարգաւաճման ու անոր հեզասահ երթին:

Իր խօսքի աւարտին, Առաջնորդ Սրբազանը պաշտօնաւարտ գլխաւոր հիւպատոսին նուիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը խորհրդանշող յիշատակի ոսկեայ մետալ մը եւ Կաթողիկոսութեան փրկուած գանձերուն մասին հատորէն օրինակ մը, հաւաստելով, որ Տիար Գ. Կիրակոսեան Լոս Անճելըսի հայութեան սիրտերուն ու յիշատակներուն մէջ պիտի մնայ իբրեւ բարեկամ մը եւ սերտ գործակից մը, ինչպէս որ մենք ալ հայրենիքին մէջ իրմով պիտի ունենանք յաւելեալ բարեկամ մը:

Տիար Գագիկ Կիրակոսեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին՝ ի պատիւ իրեն կազմակերպուած այս ընդունելուեան ու հրաւերին համար, ապա նաեւ գոհունակութեամբ արտայայտուեցաւ մեր Թեմի շրջանին մէջ իր տարած աշխատանքին մասին, յիշեցնելով, որ ան մեր գաղութի բոլոր միաւորներուն ու Ազգային Առաջնորդարանին հետ առաջին իսկ օրէն ունեցաւ սերտ ու համերաշխ գործակցութիւն, իսկ այժմ, քաղցր յիշատակներով պիտի վերադառնայ Յայաստան: Ան համոզում յայտնեց, որ հայկական այս գաղութը ունի ուժականութիւնը եւ կարողականութիւնը տնտեսապէս ու այլ միջոցներով զօրավիզ-գործակից ըլլալու Յայաստանին:

Ընթրիքէն ետք, երեկոն վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիք»ով եւ «Մեր Յայրենք» քայլերգին խմբերգումով:

FAREWELL RECEPTION IN HONOR OF GAGIK GIRAGOSSIAN, CONSUL GENERAL OF THE REPUBLIC OF ARMENIA

On the evening of Wednesday, May 31, 2006, a reception was held at the «Karapetian» Hall of St. Garabed Church to bid farewell to the honorable Gagik Giragossian, outgoing Consul General of the Republic of Armenia, and his wife Marina.

The reception was organized by the Western Prelacy, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and hosted by benefactor Mrs. Ashkhen Pilavjian. In attendance were members of clergy, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, A.R.F. Bureau member Dr. Viken Hovsepian, members of the previous and newly elected Prelacy Executive Council, representatives of the A.R.F. Central Committee, Board of Regents, Board of Trustees Chairmen from Prelacy parishes, representatives of Armenian organizations, press, Ladies Auxiliary members, and Prelacy friends and donors.

The reception, emceed by Archpriest Vicken Vassilian, began with a prayer by the Prelate and clergy members, and included an artistic program by tenor Suren Hazarian accompanied on the piano by Prof. Levon Arahamian.

During the reception, remarks were made by Chairman of the previous Executive Council Hrair Balian, Chairman of the newly elected Council Dr. Garo Agopian, and A.R.F. Central Committee representative Hovig Saliba, who expressed their sentiments towards the Consul General and his gracious wife, and also their best wishes to the couple and their family as they return to Armenia.

In his closing remarks, the Prelate emphasized that from the Consul General's very first day in office, he became a part of the Prelacy family and has since that time maintained a close association with the Prelacy. His Eminence commended Mr. Giragossian's efforts in maintaining fruitful relations with members of our Western Region, and before concluding his remarks, offered the blessings of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, to the Giragossians, after which he presented the couple with a gold medal of the Catholicosate's symbol, along with a book of the lost treasures of Cilicia. The Prelate assured that the Consul General will remain in the hearts and memories of the Armenian community of Los Angeles as a close friend, and that we now have a new friend in our homeland, Armenia.

Following the Prelate's remarks, Mr. Giragossian expressed his heartfelt thanks for this honor and gratitude for the close collaboration he had with the Prelacy during his term in office, stating that he will return home with these fond memories in his heart.

The reception closed with the Prelate reciting "Bahbanich" and the collective singing of "Mer Hayrenik".